# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
# ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
# ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ


ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 326, ֆաքս՝ (374 10) 540 603
Էլ.փոստ՝ scwe@scws.am, scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan 0010, Armenia
Tel.: (374 10) 540 326, fax: (374 10) 540 603
E -mail: scwe@scws.am, scws@scws.am,


<<20>> 12 2014թ. N 03/06/2432-14

Ձեր ______________ 2014թ. N ________

**Ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների գնման համար շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին**

<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված N ՇՀԾՁԲ-11/1 - <<->> շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունը: Սույն հրավերի ծածկագիրն է հանդիսանում «ՀՀԳՆՋՏՊԿ – ՇՀԾՁԲ - 11/1 -15/1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով ոչ ուշ քան 2014 թվականի դեկտեմբերի 29-ը, ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Արայիկ Մնացականյանը:

Հայտերը կբացվեն 2014 թվականի դեկտեմբերի 29-ին, ժամը 11:00:

Գնման առարկա է հանդիսանում կոմիտեի կարիքների համար ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների ձեռքբերումը:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

- «Պիտանելիության չափորոշիչ».

ա. գնման գործընթացին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում՝ պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

- «Ֆինանսական չափորոշիչ»

բ. Գնային առաջարկ (Հավելված N 1.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՀՀԳՆՋՏՊԿ – ՇՀԾՁԲ - 11/1 -15/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ՀՀԳՆՋՏՊԿ – ՇՀԾՁԲ - 11/1 -15/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների հրավերի պահանջների համաձայն՝ գնային առաջարկն անհրաժեշտ է նեկայացնել համաձայն հավելված N 1.1-ի:

Կից ներկայացնում եմ կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք հայտի օրնակելի ձևը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի էլեկտրոնային փոստի հասցեն՝ scws@scws.am:

**Մ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

Ա. Մնացականյան
54.02.29